Էդգար Հովհաննիսյան

ԽՍՀՄ Ժողովրդական արտիստ, երգահան

Ծնվել է 1930թ. Երևանում:

1953թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան՝ Գր. Եղիազարյանի դասարանը, 1957թ., Արամ Խաչատրյանի ղեկավարությամբ, Մոսկվայի կոնսերվատորիան:

1962 - 1968թթ. եղել է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավարն ու տնօրենը, 1970-74թթ.՝ երգիպարի պետական համույթի գեղարվեստական ղեկավարը:

1986 - 1992թթ. ղեկավարել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան:

Նա հեղինակ է «Սասունցի Դավիթ» օպերա-բալետի, «Հավերժական կուռք», «Անտունի», «Ժաննա դ'Արկ», «Սուլամիթ» բալետների, «Գրիգոր Նարեկացի» օրատորիայի, երեք սիմֆոնիայի, ժողովրդական մի շարք երգերի մշակումների, կամերային և երգչախմբային ստեղծագործությունների:

Մահացել է 1998 թվականին: